ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
26.05.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/7 գնման պայմանագրի

ք. Երևան «22» «12» 2025թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ.Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Աննա Խաչատրյան Վարդանի» Ա/Ձ-ն, ի դեմս Աննա Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 11.12.2025թ. N 1829-Ն որոշումը և Երևան քաղաքի կրթական օբյեկտների վերանորոգման/հիմնանորոգման տեխնիկական վերլուծության և խորհրդատվության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 26.05.2025թ. կնքված ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/7 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.17 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում «21 549 825.75 (քսանմեկ միլիոն հինգ հարյուր քառասունինը հազար ութ հարյուր քսանհինգ ամբողջ յոթանասունհինգ)» թիվը և բառերը փոխարինել «26 014 136.25 (քսանվեց միլիոն տասնչորս հազար մեկ հարյուր երեսունվեց ամբողջ քսանհինգ)» թվով և բառերով, «2057.1» թիվը փոխարինել «6097.2» թվով, իսկ «2 773 095.5» թիվը փոխարինել «7 237 406» թվով:

1.1.2 Պայմանագրի N 1 հավելվածում «21 549 825.75» թիվը փոխարինել «26 014 136.25» թվով:

1.1.3 Պայմանագրի 2025 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, Համաձայնագրի հավելվածը կազմված է երկու էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011057859 ՀՎՀՀ 02565827 Գլխավոր քարտուղար՝ _____ Գ. Եղիազարյան (ստորագրություն) Կ.Տ.	«Աննա Խաչատրյան Վարդանի» Ա/Ձ ք.Երևան, Արզումանյան 8ա, 27 բն. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Հ/Հ 220579674957000 ՀՎՀՀ 28153672 _____ Ա. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
26.05.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/7 գնման պայմանագրի
«22» «12» 2025թ. կնքված N 2 համաձայնագրի

«Հավելված N 2
26.05.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/7 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժ նի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71621100-506	Երևանի Սմբատ Բյուրատի անվան հ. 125 հիմնական դպրոց	-	-	-	-	-	-	7 745 153.5	7 745 153.5	7 745 153.5	7 745 153.5	7 745 153.5	7 745 153.5	7 745 153.5
		«Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	-	4 875 800	4 875 800	4 875 800	4 875 800	4 875 800	4 875 800	4 875 800

		«Երևանի Թելմանի անվան թիվ 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	-	-	-	6 155 776.75	6 155 776.75	6 155 776.75	6 155 776.75	6 155 776.75	6 155 776.75	6 155 776.75
		Երևանի Ա. Հովհաննիսյանի անվան հմ. 194 հիմնական դպրոց	-	-	-	-	-	-	2 773 095.5	2 773 095.5	2 773 095.5	2 773 095.5	2 773 095.5	7 237 406	7 237 406
ԸՆԴԱՄԵՆԸ			-	-	-	-	-	-	**21 549 825.75**	**21 549 825.75**	**21 549 825.75**	**21 549 825.75**	**21 549 825.75**	**26 014 136.25**	**26 014 136.25**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: »:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀ 900011057859
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Աննա Խաչատրյան Վարդանի» Ա/Ձ
ք.Երևան, Արզումանյան 8ա, 27 բն.
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220579674957000
ՀՎՀՀ 28153672

_____ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

19 դեկտեմբերի 2025թ.

Թիվ 065-757

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 25652726506

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և Աննա Վարդանի Խաչատրյան ԱՁ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքված թիվ «ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-25/7» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 2.601.420 (երկու միլիոն վեց հարյուր մեկ հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 30 նոյեմբերի 2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-25/7» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Աջափնյակ» մասնաճյուղի կառավարիչ Ն. Սահակյան

Կատարող՝
Գայանե Գալստյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8251)

19 դեկտեմբերի 2025թ.

Թիվ 065-758

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 25652726484

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/7» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում Աննա Վարդանի Խաչատրյան ԱՁ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքված թիվ «ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/7» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 3.902.125 (երեք միլիոն ինը հարյուր երկու հազար հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 30 նոյեմբերի 2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/7» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Աջափնյակ» մասնաճյուղի կառավարիչ Ն. Սահակյան

Կատարող՝
Գայանե Գալստյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8251)